

ձեռագրաց Սեբասիոյ. (Հակոբս Ամուրեայի մէջ). ընդ մամուլ է
իւր Հնդկահայքը. ունի անտիպ գործեր ալ:

ԹՈՐՈՍ ԵՊՍ. ՀԱՄԹԵՑԻ ԿԱՄ ԱԹԸԽՑԻ.—Մբ. Թորոս եպոս.
Ս. Յակոբի Միաբանութեան կողմէն 1651ին ներկայ կ'ըլլայ
Փիլիպպոս կթղ.ի Ս. Յակոբի վանքին մէջ գումարած ժողո-
վին. (Ազգայն. էջ 2457). Անկիւրիոյ Կարմիր վանքին մատենա-
դարանին ձեռագիր Աստուածաշունչը (Թ. 23) ընդօրինակուած
1656-1666ին ձեռամբ Թորոս եպոս.ի, որ ինքզինքը կ'անուանէ
Հակոբեցի կամ Արղիսցի. նոյն ձեռագիրը Թորոս եպոս. ընդօրին-
նակած է Բեթղէհէմի Ս. Աստուածածին եկեղեցիին, Կաֆայի և
Կ. Պոլսի մէջ. դոյն Աստուածաշունչին յիշատակարանին համա-
ձայն, Աստուածատուր եւ Եղիազար պատրիարքները 1654ին
Նւ. կը նշանակեն Թորոս եպոս.ը Տիգրսևակաթիւն և Մարաց աշ-
խարհին. չորս տարի կը տեւէ նուիրակութիւնը եւ յետոյ ան
կը վերագառնայ Երուսաղէմ. բայց չկրնար մնալ հոն. և կ'եր-
թայ Կեսարիա և Գաղատիա, ատեն մը ետքը Մարտիրոս վար-
դապետի հրամանով կ'ուղևորի Ղրիմի Ս. Խաչ վանքը, եւ հոն
կ'աւարտէ Ածաշունչը ՌձԺԵ. (= 1666) դեկտ. 10ին, իրեն հա-
մար կըգրէ թէ՛ իննսնամեայ է, բայց գրքին մնացեալ մասերը և
յիշատակարանը կ'լրացնէ Կ. Պոլիս. (Կիլիկիոսեան Յուդ. անտիպ):
Թորոս եպոս. ընդօրինակած է ՌձԺԳ (= 1664) թուին հաւաքածոյ
մը Սիւնեցի (Որոտնեցի) Մինաս վարդապետին համար, նոյն հա-
ւաքածոյին Սաւոռի Պատմութեան սկիզբը կայ հետեւեալ յիշա-
տակարանը. «Գիրքս այս յիշատակ է Թորոս եպոս.ին ի վայե-
լումն Սիւնեցի (Որոտնեցի) Մինաս վարդապետին. որքան որ
կենդանի է՝ զմեզ անմոռանալի ունիցէ ի մտի իւրում. յորժամ
ընթեռնու գտորբ գիրքս՝ զմեզ յիշեսցէ եւ ինքն յիշեալ լիցի
առաջի Աստուծոյ. թուին ՌձԺԳ (= 1664): Զսկսեալս իմ դու
կատարեա, Տէր Յիսուս: Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛
մեզ Տէր, եւլն » սկիզբը ունի այս ոտանաւորը.

«Իմաստունն իմանայ
Եւ անիմաստն զարմանայ,
Բայց դու ջանա՛ ուսիր զսա,
Զի պիտոյիւք պիտոյանայ »

(Էջմ. Յուդ. թ. 1698,